

Ուսումնական նախագծի պլան

Գրականություն

7-րդ դասարան

Ուսուցիչ՝ Լ. Վասիլյան /Ջրահովիտի Վ. Ա. անվան միջն. դպ./

2023-2024 ուսումնական տարի

### **Նախագծի անունը՝**

Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը /ուսումնասիրություն/

Տևողություն՝ կաճաժամկետ

### **Հիմնահարցը՝**

Ինչպիսի՞ն է հայրենիքի կերպարը «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունում

### **Նպատակը՝**

1. Տեքստի ըմբռնում. ամրապնդել պատկերացումը տեքստում պատկերված հայրենիքի, հայրենի բնության, մարդկային ապրումի և հույզի, գեղեցիկի մասին:

2. Տեքստի ուսումնասիրում. ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, տեքստի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնահատկությունների, ժամանակի ընթացքում ժանրի որոշակի ձևափոխությունների մասին:

3. Տեքստի ստեղծում. նպաստել ստացած գիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով և ստեղծագործաբար, բանավոր/գրավոր կերպով վերարտադրելուն, խաղի, հնարավորության դեպքում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն: Համեմատել տարբեր տեքստեր, ընդհանրացումներ անել, ձևակերպել եզրակացություն, գրել կարծիք, համեմատական, վերլուծական շարադրանքներ:

### **Խնդիրները՝**

1. Ծանոթաբալ Չարենցի գրական ժառանգությանը, մասնավորապես ընկալել «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության գաղափարը:
2. Վերլուծել, զգալ պատկերը բանաստեղծության մեջ:
3. Արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը՝ զարգացնելով սովորել սովորելու, մշակութային, լեզվական կարողունակություններ, ստեղծել միջառարկայական կապեր:

### **Վերջնաարդյունքը՝**

1. Վերարտադրել գրողի կենսագրությունը, ներկայացնել ապրած ժամանակաշրջանը:
2. Նկարագրել տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը:
3. Ներկայացնել տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը:

4. Դասակարգել անհատական զգայական ընկալումներն ըստ տեքստի:

5. Ցույց տալ գրական սեռերի և ժանրերի տարբերությունը (ընդհանրական պատկերացում):

6. Վստահորեն հաղորդակցվել և համագործակցել դասընկերների, ուսուցիչների, համայնքի այլ անդամների հետ՝ ձևավորելով թիմային մտածողություն:

7. Արժևորել հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում:

### **Միջառարկայական կապ՝**

**Պատմություն:** Պատմական ակնարկ գրողի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին:

**Հայոց լեզու:** Բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն:

**Հասարակագիտություն:** Հույզեր, հեգեկան վիճակներ, որոնք դառնում են գրականության նյութ:

**Արվեստ:** Ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ:

**Աշխարհագրություն:** Վահրերի քարտեզագրում:

### **Աշխատանքային խմբեր**

1. Նախագծի կառավարիչ
2. Ժամանակի կառավարիչ
3. Հաղորդակցության կառավարիչ
4. Հետազոտության համակարգող
5. Հանրային կապի պատասխանատու

### **Առաջադրանքներն ըստ խմբերի**

**Խումբ 1** – Պատմական ակնարկ հայ ժողովրդի անցած ուղու մասին: Պատմական և աշխարհագրական ակնարկ Արարատ լեռան մասին:

**Խումբ 2** – Ներկայացնել տեղեկություններ Գ. Նարեկացու և Ն. Քուչակի մասին: Բանաստեղծության տողերը վերածել գույների:

**Խումբ 3** – Պար բեմադրել՝ ըստ <<Ես իմ անուշ Հայաստանի>> երգի: Բանաստեղծությունից դուրս գրել մակդիրներն ու փոխաբերությունները:



**Գնահատում**

Անուն- ազգանուն	Գերազանց	Լավ	Բավարար
	<p>Հետազոտական աշխատանքը կատարվել էր մանրամասնորեն՝ ուշադրություն դարձնելով ստեղծագործական կարողությունների առկայությանը, կատարած ուսումնասիրությունների աղբյուրների բազմազանությանը, ճշգրտությանը: Թիմում աշխատանքը բաժանվել էր հավասարապես, աշխատել էին բոլորը:</p> <p>Լսարանի կողմից հնչեցրած հարցերին տրվում էին հստակ ու դիպուկ պատասխաններ:</p> <p>Թեմայի առաջ քաշած նպատակներն ու խնդիրներն իրագործվեց ամբողջովին:</p>	<p>Աշխատանքը ներկայացնելու համար ընտրված էր հետաքրքիր ձևաչափ: Ուսումնասիրման աղբյուրները քիչ էին, ոչ բոլորն էին ճշգրտված:</p> <p>Աշխատանքի վերլուծությունն այդքան էլ հստակ չէր: Նկատելի էր ժամանակի ոչ ճիշտ բաշխում և օգտագործում: Հնչած ոչ բոլոր հարցերին տրվեց պատասխան: Առաջադրված նպատակն իրագործվեց մասնակի բացթողումներով:</p>	<p>Աշխատանքը չգրավեց լսարանին: Հավաքագրված տեղեկատվությունը ճշգրտված չէր: Աշխատանքի ներկայացման ձևաչափը ճիշտ չէր ընտրված: Լսարանից հնչած հարցերին չտրվեց ամբողջական պատասխան:</p> <p>Նպատակն իրագործվեց մասնակի:</p>
<b>Միավոր</b>			